

ՀԱՅ. ԻՍԶ ԱՐԴՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

Դոցենտ Ա. Բ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

# ՎՈՐՈՎԱՅՆԱՏԻՓ

ՅԵՎ

ՊԱՐԱՏԻՓԵՐ



616.9  
Ա-29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԽՈՎՃԱԿԱՆ ԲՈՅԱՐ

ՅԵՐԵՎԱՆ

1937

30 JUL 2010

ՀԻԱՆ ՍՈՒՇԱԾՄԱՀՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ

616.9

Q-29

այ,

ԴՈՑԵՆՏ Ա. Բ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՎՈՐՈՎԱՅՆԱՏԻՖ  
ՅԵՎ ՊԱՐԱՏԻՖԵՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԵԶՀ ԱԽՖՈԴԿՈՄԱՏԻ ՍԱՆ. ԼՈՒ. ԲՈՔՆԻ  
ԹԵՐԵՎԱՆ

1937 թ.

1 FEB 2013

6575

Տեխ. ձեվ. յեվ. սրբ. Ա. ՀԱՅՎԵՐԴՅԱՆ

Վորովայնատիֆը և պարատիֆերը վարակիչ հիվանդություններ են: Վորովայնատիֆի և պարատիֆերի դեմ հաջող պայքարելու համար, անհրաժեշտ է լավ գիտենալ, թե ինչպես և առաջդպրութիւններով և ապահովություններով հարածվում այդ տիֆը և ապա իմանալ, թե ինչ միջոցներով կարելի յե պայքարել ու կանխիլ այդ հիվանդությունը:

Ինչպես բոլոր վարակիչ հիվանդությունները, նմանապես և վորովայնատիֆը, և պարատիֆերն ունեն իրենց հարուցիչները՝ հատուկ միկրոբները, վորոնք իրենցից ներկայացնում են յուղիկներ:

Այդ միկրոբները, ինչպես և մյուս միկրոբները, կարելի յե տեսնել միայն միկրոսկոպի տակ: Միկրոսկոպը մեծացնում է 800—1000 և ավելի անգամ: Մեծացնելուց հետո վորովայնատիֆի և պարատիֆերի միկրոբները յերեսում են փոքրիկ քորոցի ծայրի չոփի:

Վորովայնատիֆի և պարատիֆերի միկրոբներն անցնում են մարդու մարմինը բերանի միջոցով, այդ միկրոբներով վարակված ջրի, սննդի միջոցով: Վորովայնատիֆով (միկրոբներով) վարակված խմելու ջուրը կամ սննդամթերքներն անցնելով ստամոքսը, իսկ այլակեղեց բարակ աղիքները, արյան մեջ, և մարմնի մյուս մասերը, սկսում են մեր մարմնում անվել ու բազմանալ և ապա արտադրել հատուկ նյութեր (թույն): Միկրոբի այդ արտադրած նյութերը՝ տոքսինները չափազանց թունավոր են մարդու համար և առաջ են բերում մարդու որդունիցի ընդհանուր թունավորում:

Վորովայնատիֆի և պարատիֆերի միկրոբները բարենը պատու պայմաններում կարող են աճել մեծ քանակությամբ, հասնել միլիոնների:

Յեթե վորովայնատիֆի և պարատիֆերի միկրոբները չափանց կլենունակ են մարդու որդունիզմում, նրանք բավական մին զիմոցկուն են նաև մեր որդանիզմից զուրս:

Ռեկլամ. Բյուրո, պ. № 1450

«Խորհրդային հայուստանաշխի հրատակչության տպարան» 1937 թ.

Քաղաք № 759, տիրած 3000, պատվեր № 334

Կ 200  
38

Վորովայնատիֆի և պարատիֆերի մանրեները վոչնչանում  
են 70 աստիճան ջերմության ազդեցության տակ, միայն քառորդ  
ժամից հետո: Ամեների ընթացքում այդ միկրոբները կարող են  
ապրել հողի (գետնի) և ջրերի մեջ (ջրհորներում, կանդնած և  
հոսող ջրերում), սառուցի մեջ կարող են մնալ կենդան վիճա-  
կում 1—2 ամիս: Վորովայնատիֆի միկրոբներն իրենց կենսու-  
նակությունը կարող են պահպանել յերկար ժամանակ յուղի,  
որոնք, կաթի մեջ:

Մի խորքով այսուեղ, վորտեղ վորովայնատիֆի և պարա-  
տիֆերի պարագիտներն իրենց համար մնունդ և համապատաս-  
խան միջավայր են դանում, պահպանում են իրենց կենսունա-  
կությունը:

Վորովայնատիֆի և պարատիֆերի գլխավոր աղբյուրը հան-  
դիսանում է հիվանդ մարդը: Պետք է միշտ հիշել, վոր հիվանդ  
մարդու արտաթորություններում (կղանքում, մեղում) դանում են  
մեծ քանակությամբ վորովայնատիֆի մանրեներ. նույնիսկ վո-  
րովայնատիֆից և պարատիֆերից առողջացած մարդը յերկար  
ժամանակ՝ տարիների ընթացքում կրում է իր մեջ տիֆի մանրե-  
ները: Առողջանարուց հետո մանրեներն ազբիներից սովորաբար  
անցնում են լեզապարի, ուր հանդիպելով իրենց համար յով  
անդանյութի (լեզի) աճում են և ապրում յերկար տարիներ:

Ժամանակ առ ժամանակ յեզապարիկց մանրեները լի-  
քու հետ միասին տեղափոխվում են ազբիները և ար-  
տօրթորությունների հետ միասին անցնում, վարակում են  
շրջապատի միջավայրը: Այն մարդիկ, վորոնք իրենք չեն հիվան-  
դանում, բայց իրենց մարմնում կրում են տիֆի մանրեներ,  
կոչում են բացիւակիրներ: Այդ բացիւակիրները վտանգավոր  
են մեղ համար, նամանավանդ այն ժամանակ, յերբ նրանք աշ-  
խատում են սննդամթերքների արտադրության և նրանց պահ-  
պանման ու առևարի գծով:

Վորովայնատիֆի և պարատիֆերի վարակը (միկրոբը) բա-  
ցիլիքիներից և թե մանավանդ տիֆով հիվանդ մարդկանցից  
անցնում և առողջներին և վարակում նրանց մի քանի ճանա-  
պարհներով:

Նախ և առաջ, վորովայնատիֆը և պարատիֆերն առողջին  
են փոխանցվում շփման միջոցով, այդ պատճառով հիվանդներ

ինչումողներն ամեն անգամ հիվանդի և նրա իրերի հետ շփում  
ունենալուց հետո, պետք է մարդուր րվանան ձեռքերը. կեղասո-  
ված (վարակված) ձեռքերով կարէի յե թե վարակվել և թե  
վարակել շատ շատերին: Իզուր չե, վոր վորովայնատիֆի այլ  
կերպ անվանում են «կեղասով ձեռքերի հիվանդություն»:

Անհրաժեշտ և նորից հիշել, վոր վորովայնատիֆի վարակն  
անցնում և մարդուն բերանի միջոցով, ուստի կեղասով ձեռքերի  
դերն այս վարակի տարածման տեսակետից խոչը և: Հիվանդի  
կեղասոված սպիտակեղենները և մյուս բոլոր իրերը, նամանա-  
վանդ նրա վիշերանոթը և զարծածած տմանները, բոլորն ել վա-  
րակիչ են: Անմաքուր ձեռքերով կարէի յե վարակել թե իրեն  
և թե մաքուր ամանները, չացը, միուր և մյուս կենսամթերքնե-  
րը: Անմաքուր ձեռքերով կով կթելու գեպքում ևս հեշտությամբ  
կարէի յե վարակել կաթը: Շատերը վորովայնատիֆ կամ պա-  
րատիֆ են սամանում վարակված հում կաթ զործածելուց, այդ-  
ովիսի մարդկի թերապիահատում են վարակված կաթի գերը սուր  
տղիքային հիվանդությունների տարածման գործում և մյուս  
կողմից, չեն գիտակցում, վոր կաթը վարակի տեսակետից միան-  
դամայն անմիաս և դանում յետացնելուց հետո: Վորովայնա-  
տիֆով և պարատիֆերով կարէի յե վարակվել նաև դանաղան  
կոնաչեղենից և բանջարեղենից, վորոնք պարունակում են տիֆի  
մանրեներ: Կանաչեղենը և բանջարեղենը պարունակում են իրենց  
վրա վորովայնատիֆի միկրոբներ, մասնավորապես այն գեպ-  
քում, յերբ տվյալ բանջարեղենի հոգամասը կամ վոռոգման  
համար զործածվող ջուրը վարակված և լինում տիֆով հիվանդի,  
կամ բացիւակիրի կղանքով, կամ մեղով— այսինքն տիֆի միկ-  
րոբներով:

Վորովայնատիֆի և պարատիֆերի փոխանցման ճանապարհ-  
ներից մեկը հանդիսանում է ջուրը: Այդ հիվանդության ջրի  
միջոցով տարածվելու յերեսությը սովորաբար մասսայական բը-  
նույթը և կրում: Անկասկած ջրմուղների կառուցման զործը մեծ  
ոժանդակություն և ցույց տալիս մեղ, վորովայնատիֆի գլուխ  
պայքարելու ուղղությամբ: Խմելու ջրերը, վորոնք վարակված են  
լինում վորովայնատիֆի միկրոբներով, սովորաբար կեղասո-  
վածում են մարդու արտաթորություններով, յերբ այդպիսի ջրե-  
րում լիացը են անում, յերբ ջրհորի, գետի, առվի մոտ գտնվող

Հողը կդանքով ու մեղով կեզտուալած և լինում . անձրեները մաքը լով գետնի վրա յեղած զանազան կեզտուալթյուները (միջրուցները) , թափում են խելու համար պործածված ջրի՝ գետի , ջրհորի , աղբյուրի , առվի մեջ , վորոնք այդ պատճառով կառնում են չափաղանց վտանգավոր : Վարակված ջրից տիֆով կարելի յե հիվանդանալ վոչ միայն ջուրը խմելուց հետո , ամեւ լողանացու ու լվացինելու ժամանակ . վորովայնատիֆով վաս ջրամատակարարման ուղեկիցն և : Ջրամատակարարման բոլոր աղբյուրները միշտ ել վտանգի տակ կարող են լինել , յեթե նրանք սանիտարական պահանջների տեսակետից պաշտպանված չեն զանազան կեզտուալթյուններից , նամանավանդ մարդկային և կենդանիների արտաթորություններից : Ամեն մի ջրմուղ անչուշտ սետք և ունենա տեղի սանիտարական բժշկի կողմից սահմանված ջրամատակարարման սանիտարական պաշտպանության դուի : Վերջին 2—3 արդիա ընթացքում մեղ մոտ կառուցված նոր ջրմուզները (կառուցված են զանազան գյուղերում մոտ 170 կիլոմետր յերկարությամբ ջրմուզներ) ապացուցում են այն , վոր սուր աղբքային հիվանդությունները (վարովայնատիֆը , պարատիֆերը , դիղնուտերիա , զանազան լուծերը) հետզհետեւ վերանում են այն գյուղերում , վարուղ դետի և առվի ջրերի փոխարեն ներկայումս դործ են ածում ջրմուղի մաքուր ջուր :

Ամերու կարեների համար դործածվող կեզտու ջուրը (գետի , առվի , կեզտուալած աղբյուրների , ջրհորի) ինչպես հայտնի յե յեռացնելուց հետո աղատվում և կենդանի միջրուներից և այսպիս անվանում է անվանում :

Հողը նժամնապես հանդիսանում է փոխանցման ձանապահներից մեկը . վորովայնատիֆի և պարատիֆերի միջրուները հօգում բավականին յերկար ժամանակ պահպանում են իրենց դոյտթյունը . Հողը հաճախ կեզտուալիում և կղանքով և մեղով , դրյանականին չորրի անբարեկարգ արտաքննությունների : Վատանզավոր են նաև մարդու արտաթորությունները , վորոնք լինում են աների մոտ , բնակարանների շուրջը , զանազան քանդված պատերի մոտ և այլն : Արտաքննությունը բացակայությունը , ինչպես նաև արտաքննությունի վատ պահպանումը (կեղուու վիճակում և առանց դեղնակցելայի) , մեծ չափով ոժանդակում են վորովայնատիֆի տարածմանը :

Հակասանիտարական պայմաններում պահվող հասարակական արտաքննությունները , վորովիս միջրուներով վարակված մի վայր , հանդիսանում են վորովայնատիֆի և պարատիֆերի , և առաջասարակ բոլոր աղիքային սուր ինֆեկցիոնների վարակի աղբյուր :

Վորովայնատիֆի և պարատիֆերի տարածման դուրս խոչը զեր են խաղում ձանձները : Ամեն մի ձանձն իրեն մարմնի վրա (վատքերի , մազերի , թևերի և մարմնի մյուս մասերի վրա) կարող և մի անգամ ից փոխանցել մոտ և միլիոն միլիոր : Ձանձը լինում է զանազան տեղերում , նրան կարելի յե հանդիպել ամեն ուղի՝ արտաքննություն , դոմերում , դոմադրի վրա , աղբատեղերում , կղանքի վրա , սննդամթերքի վրա , բնակարանում , խանություն և այլն : Պարզ ե , վոր ձանձը նստելով վարակված տեղիում աղբի ու կղանքի վրա , յուր մարմնի միջոցով մեծ քանակությունը վորովայնատիֆի և պարատիֆերի միջրուներ և փոխաղրում սննդամթերքներին՝ հացին , կաթին , մսին , պանրին , պտուղներին և այլն : Իհարեւ , կերակրի լույլ արտպիսի սննդամթերքներով , մենք վարակվում ենք վորովայնատիֆով և պարատիֆով :

Այսպիսով մենք տեսնում ենք , վոր վորովայնատիֆով կամ պարատիֆով կարող ենք վարակվել հիվանդ մարդուց կամ բացիլակից , վորունց արտաթորությունները (կղանքը , մեղը) վարակում են մեր ըրջապատը՝ հողը , ջուրը , սննդամթերքները . այդ վարակն անցնում է առողջ մարդկանց այս կամ այն ձանապահնով և առաջ բերում վորովայնատիֆ կամ պարատիֆ հիվանդություն :

Վորովայնատիֆը ծանր հիվանդություն է : Վորովայնատիֆով մարդ հիվանդանում և այն ժամանակ , յերբ համապատասխան քանակությամբ տիֆի թունակոր միկրոբներն անցնում են մարդու որովանիզմը , իսկ մարդու որովանիզմը , չնորհիվ պաշտպանունակության թույլ ուժերի և արտաքնն միջավայրի աղդեցության , հիվանդանում և վորովայնատիֆով : Մարդու որովանիզմն այլպիսի գեղքում հանդեպ վարակի թույլ դիմություն և ցույց տալիս :

Վորովայնատիֆով մենք հիվանդանում ենք , յերբ վարակը մեր որգանիզմը մտնելուց հետո անցել է 10—20 որ . այս ժա-

ժանակամիջոցը կոչվում է գաղտնի կամ լինելուքացիոն շրջան (զարգացման շրջան)։ Միայն այդ գաղտնի շրջանից հետո սկսում են տիֆի նշանները, հիվանդը հետզհետե կորցնում է ախորժակը, մարմինը կոտրատվում է, հիվանդի տաքությունն առողիանարար բարձրանում, ուժեղանում է, սովորաբար առաջ է գալիս լուծ, հիվանդի լեզուն չորանում է, առաջ է գալիս որդանիզմի ընդհանուր թույլություն։ Բարձր ջերմաստիճանի և թունավորման (միջրաբների թույնով) ազդեցության տակ հիվանդը կորցնում է իր գիտակցությունը և զառանցում, հետեաբար ինքնազդացումը վտանում է։ Այս վիճակում հիվանդությունը տեսում է մոտ մի ամիս։ Լինում են նաև հիվանդության թեթև տեսակներ՝ հիվանդությունը տեսում է 10—15 որ, կամ հիվանդը վստի վրա յե անցկացնում հիվանդությունը։ Պատահում է նաև բոլորովին տառաց հիվանդության նշանների վորովայնատիֆ։ Չնայած նրան, վոր առանց այս նշանների տիֆը հիվանդի համար սովորաբար չափազանց թեթև և լինում, սակայն առողջներին փոխանցվելու տեսակետից, հիվանդության այսպիսի ձևն ավելի վտանդավոր է, վորովհետեւ հաճախ այսպիսի դեպքերը վրիպում են մեր ուշադրությունից։

Պարատիֆերի հիվանդության ընթացքը լինում է համեմատաբար ավելի կարճատեւ։ Վորովայնատիֆի և պարատիֆերի վարակը բերանի միջոցով անցնելով ազիֆերը, առաջ է բերում այնտեղ բորբոքում և վերքեր, յերեմն այդ վերը Յ շաբաթիա ընթացքում խորանուով կամ ծակում են այլտեղի աղօքը, կամ արյունահոսություն առաջ բերում։ այս բարդությունների հետեւանքով վորովայնատիֆով հիվանդները հաճախ մահանում են։

Վորովայնատիֆով կամ պարատիֆերով հիվանդների համար մեծ նշանակություն ունեն ինամքը և գիետան (կերակրումը)։ Գետք և գիտենալ, թե ինչպես պահել հիվանդին և ինչպես կերպել նրան։ պարզ՝ վորովայնատիֆը ծանր հիվանդություն է, հիվանդը սովորաբար ծանր ապագորություն և թողնում, պահան-

հանգիսանում և վարածման տեսակետից հիմնական առարկությունը։ Այդ պատճառով պահանջվում է հիվանդին մեկուսացնել, զրահամար, հիվանդը շահերից յելներով և վարակի աղբուրը շրջապատի համար անվտանգ դարձնելու նպատակով, անհրաժեշտ է վորովայնատիֆով կամ պարատիֆով հիվանդներին ուղարկել հիվանդանոց։ Հիվանդանոցը տիֆով հիվանդների համար լուգագույն վայրն է հանդիսանում։

Բնի մի անգամ հիվանդացել է վորովայնատիֆով կամ պարատիֆով, սովորաբար յերկրորդ անգամ չի հիվանդանում, այսինքն արգակիսի մարդիկ (հիվանդացած մարդիկ) ձեռք են բերում վորովայնատիֆի հանդեպ գիմազրողականություն կամ, ինչպես ընթացքած և առել՝ իմունիտես։ Հիվանդացած մարդու արյան մեջ առաջ էն զալիս վորովայնատիֆի-պարատիֆերի վարակի զեմ հակաթույներ, վորոնք մնում են մարդու հիվանդացած մարմնում համարյա նրա ամբողջ կյանքի ընթացքում։

## Ի՞նչ ՊԵՍ ՊԵՏՔ Ե ՄԵԶ ՊԱՆՏՊԱՆԵՆՔ ՎԱՐՈՂԱՅԱՅԻ ՏԵՖԻՑ—ՊԱՐԱՏԻՖԻՑ

Վորովայնատիֆի դեմ, ինչպես և պարատիֆերի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է, վորովեսի ամեն մի քաղաքացի իրեն լավ պատկերացնի, թե ինչ հիվանդություն է վորովայնատիֆը և պարատիֆը, ինչ ճանապարհներով և տարածման այդ հիվանդությունը։ Վորովայնատիֆին ծանրթանալուց հետո իշարկել հեշտ կլինի թե՛ պայքարել նրա գեմ և թե՛ պաշտպանվել նրանից։ Աշխատավորների առողջության պահպանումն իրենց աշխատավորների գործն է, այսպես և խորհրդային իշխանության լողությը։

Վորովայնատիֆը և պարատիֆերը կանկելու նպատակով նախ և առաջ պետք է ազգաբնակության ապահովել մաքուր և առողջ ջրով։ Ջրմուղների կառուցումը, վարը մեծ թափով անց և կացվում մի շաբաթ շրջաններում, պետք և համարել ամենից աղցեցիկ միջոցը։

Ջրմուղներ կառուցելուց հետո անհրաժեշտ է առեն կերպ պաշտպանել նրանց դանազան կեղուտություններից։ այդ նպատակին պետք է սահմանել ջրամատակարարման համար սանիտարկան պաշտպանության գոտի՝ այսինքն ջրմուղի, աղբյուրի

Հողամասի վարչը տարածության վրա թույլ չտալ կտառոցել բը-  
նակելի և մյուս տեսակի շենքեր, թույլ չտալ տժեն մարդու անց-  
նել այլ սահմանը. պարզ է, վոր անհրաժեշտ են նաև արգելել կեն-  
դանիներին այգտեղ պահելը. քացի ազգյուրից անհրաժեշտ են սահ-  
մանել սանիտարական պաշտպանության դուժի նաև ջրմուզու խո-  
ղովաճների ուղղությամբ. պարզ է, վոր յեթե չսահմանվեն այդպիսի  
սանիտարական դուժիներ, խմելու ջուրը կարող է յենթարկվել  
ենդուսության (կզանքի, մեզի միջոցով) և ջուրը կարող է  
դառնալ վորավայնատիֆի և պարատիֆերի բանկման պատճառ:

Արտաքնոցներին անհրաժեշտ են պահել սանիտարական պա-  
հանդիների համաձայն, շարունակ հսկել արտաքնոցների մաքու-  
թյանը և պարերաբար կատարել գեղինֆեկցիա. արտաքնոցների  
գեղինֆեկցիան հանդիսանում է գլխակոր միջոցներից մեկը:  
Սուլորաբար, արտաքնոցների և ազրի արկզների գեղինֆեկցիան  
կատարվում է կրի կամ քլորակրի լուծույթով: Կրի լուծույթ  
պատրաստելու համար վերցնում են մեկ դույլ ջրին 1 կիլո, կամ  
յեթի ուղում են պատրաստել ավելի ուժեղ, յերկու կիլո այլած,  
բայց չհանդած կիր (կրի վառարանից նոր դուրս յեկած կիր):  
Ավելի ուժեղ միջոց են քլորակրի լուծույթը— մեկ դույլ ջրին կա-  
րելի յե վերցնել նույնպես 1 կամ յերկու կիլո քլորակրի: Թե՛  
համարակ կրից և թե՛ քլորակրից պատրաստված լուծույթն ան-  
հրաժեշտ է գործածել նույն որը, վոչ մի գեղպատմ ուշ, այլևսպ  
որ լուծույթները կորցնում են իրենց գեղինֆեկցիոն հատկու-  
թյունները: Այդ լուծույթները պարերաբար պետք է լցնել  
արտաքնոցները և ազրի արկզները: Աչքի առաջ ունենալով, վոր  
կենսամթերքները կարող են կեղասութել վորովայնատիֆի և պա-  
րատիֆերի միկրոբներով կեղասութեռութիւնութելու, ճանձերի և այլ  
պատճառների շնորհիմ՝ անհրաժեշտ են բոլոր տեսակի սննդամբ-  
թերքները պահել համապատասխան սանիտարական պայմաննե-  
րում: Կեղասութեռութիւնութերքներին մոտենալ՝ նշանակում  
են կեղասութել և վարակման յենթարկել նրանց:

Այս կամ այն կենսամթերքը տեղափոխելու ժամանակ ան-  
հրաժեշտ է փորպեսի նա ամեն կողմից ծածկված լինի: Վոչ մի  
դեպքում, վոչ մի կենսամթերք չպետք է բաց վիճակում թողնել:  
Ամեն անդամ ճանձը նստելով սննդամթերքներին վրա, վարակում և  
այդ մթերքը բազմաթիվ միկրոբներով: Ամեն մեկը պետք է բա-

հեշտ, վոր ճանձի վրա միլիոնավոր միկրոբներ կան: Կաթը համ-  
դիսանում է տիֆի միկրոբների համար լավ միջավայր: Նկատի  
ունենալով այդ հանգամանքը, անհրաժեշտ է կաթը զործածե-  
լուց առաջ յեռացնել: Վոչ մի դեպքում, վոչ վոր իրեն թույլ չը-  
պետք է տա առանց սապոնի ձեռքերը լվանալու, ձեռք տալ սը-  
նընդամթերքներին, կերակրվել կամ կերակրել մի ուրիշին.  
միշտ պետք է հիշել, վոր վորովայնատիֆը, պարատիֆը, զր-  
բանք կեղասութեռություններ են. յեթե խմելու  
ջուրը կասկածելի յէ (մաքուր չե ազրյուրը) և կարող է վտան-  
գալոր լինել, անհրաժեշտ է խմելուց առաջ յեռացնել այդպիսի  
ջուրը: Միանդամայն պետք է հրաժարվել մի ամանի մեջ ուստե-  
բուց. բոլոր տեսակի կանաչեղներ, բանջարեղներ և պտուղները  
ուտելուց առաջ անհրաժեշտ է խնամքով լվանալ մաքուր ջրով:  
կամ յեռացրած ջրով:

Ստամոքսա-աղլիքային խանդարումների (լուծի) ժամանակ  
անմիջապես պետք է դիմել բժշկին համապատասխան բժշկական  
ուղնություն ստանալու: Համար:

Այս և այն սանիտարական մինիմումը, վորը պարտավոր է  
կատարել ամեն մեկը: Սանիտարական մինիմումը մի կողմից  
պաշտպանում է ամեն մեկին հիվանդալուց, մյուս կողմից  
պահպանում է շրջապատի մարդկանց առողջությունը: Սանիտա-  
րական մինիմումի մեջ պետք է մացնել նաև պատվաստումը վո-  
րովայնատիֆի և պարատիֆերի գեմ:

Վորովայնատիֆից են պարատիֆերից պաշտպանվելու համար  
պատվաստումները լավագույն միջոցն են, պատվաստումները  
ազդեցությունը բացարկվում է նրանով, վոր հիվանդ մարդի  
առողջանալուց հետո ձեռք է բերում արյան մեջ վորովայնա-  
տիֆի հակաբիույներ:


Գիտնականներն ապացուցել են, վոր յերբ մարդու մարմնի  
մեջ տիֆի մեռցրած միկրոբներ են մացնում, մարդու արյան մեջ  
առաջ են գալիս հակաբիույներ: Այս նոյնականութիւնը են  
վորով քանակությամբ վորովայնատիֆի և պարատիֆի միկրո-  
բներ, մացնում են բարձր ջերմաստիճանի աղդեցության տակ,  
սպանված միկրոբները խառնում են աղաջրի մեջ (Փիզիոլո-  
գիական լուծույթ) յենթարաշշային սրակում են կատարում մաք-  
կանց 2-3 անգամ: Այս պատվաստումները լավ է կատարել մինչե-

առմառը՝ այսինքն մինչև վորովայնատիֆի «սեղոնը», քանի վոր վորովայնատիֆը և պարատիֆերն այիլի տարածված նն լինում ամառվա և աշնան ամիսներին; Պատվաստումները միայն թեթև ցավ են պատճառում որոկած տեղը, 6-10 ժամից հետո կարող և յերեմն վորով մարդկանց ջերմաստճանը թեթև կերպով բարձրանալ: Պատվաստումների նշանակությունը մեծ է: Պատվաստվածների մեջ հիվանդացում չափազանց հազվագյուտ դեպքումն ենկատվում: Վորովայնատիֆի և պարատիֆի դեմ պատվաստված մարդիկ պատվաստումից 8-12 ամիսների ընթացքում չեն հիվանդանում այլ հիվանդություն:

Պատվաստի մնարաժեշտությունը զդացվում և այն մարդկանց համար, վորոնք աշխատում են մնարդարդության զծով, ջրմուղում, կոյուղում և աշխատանքի այն բնադրվաստում, վորտեղ զդացման և միավայրի կամ պարատիֆերի վտանգը:

Վորովայնատիֆով և պարատիֆերով բոլոր հիվանդներին ողեաք և բուժել միայն հիվանդանոցում: Անհրաժեշտ և դիտակցել, վոր հիվանդանոցում տիֆով հիվանդն ստանում և միանդամայն լավ խնամք ու համապատասխան բուժում, միենույն ժամանակ, շնորհիվ հիվանդի մեկուսացման (հիվանդին հիվանդանոցում տեղավորելը), նրա արտաթորությունները, կղանքը, մեղքը, շրջապատի համար դառնում և անվտանգ: Գետք չե շտապել գուրս գրվել հիվանդանոցից. վաղաժամ գուրս գրվելու դեպքում հիվանդությունը կարող է կրկնվել: Ժամկետից չուտ (առանց բժշկի խորհրդի) գուրս գրվելու դեպքում, առողջացող հիվանդը վտանդավոր և կ վարակիչ շրջապատի համար:





ՀՀ Ազգային գրադարան



NL0273740

ԳԻՒԸ 20 ԿՈՊ.

79

6575

Доцент А. Б. АЛЕКСАНЯН

БРЮШНОЙ ТИФ

и

ПАРАТИФЫ

Изд. Син. Просвет. отд. НКЗдрава Арм. ССР  
ЕРЕВАН—1937